# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ CBA-2026-072 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

## ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ № 1

ՀՀ կենտրոնական բանկի կարիքների ապահովման համար մաքրման կայանի տեղադրման նպատակով **CBA-2026-072** ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է 23.10.2026թ. դրությամբ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները՝

### 1. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Որպես կեղտաջրերի մաքրման տեխնոլոգիա նշված է մեմբրանային կենսառեակտորի (MBR) տեխնոլոգիան՝ ուլտրամանուշակագույն ախտահանման բլոկով: Արդյո՞ք դա պարտադիր պահանջ է, թե՞ թույլատրելի է կիրառել մաքրման այլ տեխնոլոգիաներ և մեթոդներ:

### ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հրավերի Հավելված 1.1-ի 2-րդ կետով նախատեսված է հետևյալ տեխնոլոգիական պահանջը՝ MBR (մեմբրանային կենսառեակտոր) կամ համապատասխան էկոնիտային ֆիլտրացիա՝ հավելյալ ուլտրամանուշակագույն (UV) ախտահանման համակարգով: Հետևաբար, առաջարկվող տեխնոլոգիական լուծումները պետք է համապատասխանեն հրավերով սահմանված պահանջներին:

### 2. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Նշված են մաքրման կայանի հետևյալ չափսերը՝ 2500 × 2000 × 4160 մմ: Հարկավոր է հստակեցնել կայանի երկարությունը, լայնությունը և բարձրությունը:

### ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հրավերով սահմանված կայանի առավելագույն թույլատրելի չափերն են՝ երկարությունը՝ 4160 մմ, լայնությունը՝ 2500 մմ, բարձրությունը՝ 2000 մմ:

## 3. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Նշված են մաքրված կեղտաջրերի սահմանային ցուցանիշներ՝ հաշվի առնելով մաքրված ջրերի արտահոսքը Սևանա լիճ: Հարկավոր է հստակեցնել, թե տվյալ ցուցանիշները որքանով են համապատասխանում ներկայում գործող բնապահպանական և ջրային նորմատիվ պահանջներին:

### ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ցուցանիշները նշվել են՝ հաշվի առնելով միջազգային ստանդարտները և գործող նորմատիվային պահանջները: Միաժամանակ համաձայն հրավերի N 1.1 հավելվածի 1-ին կետի՝ նշվել է Սևանա լճի ավազան անվտանգ արտահոսքի նպատակով պահանջը:

## 4. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Նշված գաբարիտային չափերի պարագայում անհրաժեշտ մաքրման աստիճանի ապահովումը տեխնիկապես հնարավոր չէ, նույնիսկ այն դեպքում, եթե ճարպորսիչները տեղակայվեն անմիջապես խոհանոցային գոտում:

### ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Ճարպորսիչները տեղադրվում են խոհանոցում, իսկ կայանը բակում: Գաբարիտային չափերը հրավերով նշված են կայանի մասով, մնացած մաքրող ատրիբուտները պետք է տեղադրվեն դրանից դուրս:

## 5. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Փաստաթղթերում նշված չէ՝ արդյո՞ք նախագծի շրջանակում նախատեսվում է արտաքին կոյուղատար խողովակաշարերի (կոյուղու ցանցի) նախագծում:

### ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Արտաքին գործող կոյուղագիծ առկա է, միաժամանակ հրավերի N 1 հավելվածի 2-րդ կետով նախատեսված են առաջարկների ներկայացման համար անհրաժեշտ սկզբունքներն ու մոտեցումները: Բացի այդ համաձայն հրավերի՝ մասնակիցների համար կարող է կազմակերպվել այցելություններ՝ տեղում ծանոթանալու և հստակ պատկերացում կազմելու իրականացման ենթակա աշխատանքների ծավալի ու առանձնահատկությունների մասին

*ՀՀ կենտրոնական բանկի Մրցութային հանձնաժողովի քարտուղար՝*
*Սիրան Եգանյան*

***Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ***